

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 5

ք. Երևան

15.05.2006թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 71-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ՝ Ս. Սարգսյան:

### Օրակարգում.

**Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրություն:**

1. Հավակնորդների ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում:
2. Թեկնածուների ծրագրերի ներկայացում և հավակնորդներին հարցերի ներկայացում:
3. Խորհրդի անդամների ելույթներ:
4. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
5. Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:
6. Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

**1. Հավակնորդների ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում:**

Ջեկուցող՝ ԵՊՀ խորհրդի քարտուղար Դ. Հայրապետյան:

Դ. Հայրապետյանը հաղորդեց, որ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ԵՊՀ ռեկտորի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի սահմանված ժամկետներում գրանցվել են 2 թեկնածուներ.

1. Ղազինյան Գագիկ - Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի դեկան: Առաջադրվել է Իրավաբանական, ֆակուլտետի կողմից:

2. Սիմոնյան Արամ - Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: ԵՊՀ ուսումնական աշխատանքների պրոռեկտոր, ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար: Ինքնաառաջադրվել է:

Խորհրդի անդամ Հ. Միրզոյանը հարցրեց, թե արդյոք պահպանվել են ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի բոլոր դրույթները:

Դ. Հայրապետյանը պատասխանեց, որ բոլոր պահանջվող պայմանները պահպանված են:

Վ. Դումանյանը խնդրեց խորհրդի նախագահին ծանոթացնել ՀՀ Վարչապետի ԵՊՀ Խորհրդում փոփոխությունների կատարման մասին որոշմանը: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը որոշումը փոխանցեց քարտուղարին, որն էլ ընթերցվեց խորհրդի անդամների համար:

ԵՊՀ խորհուրդը որոշեց հաստատել գրանցված թեկնածուներին որպես ԵՊՀ ռեկտորի թեկնածուներ:

Կողմ` 71, Դեմ` 0, Ձեռնպահ` 0:

## **2. Թեկնածուների ծրագրերի ներկայացում և հավակնորդներին հարցերի ներկայացում:**

Ըստ Այբբենական կարգի առաջինը ելույթ ունեցավ Գագիկ Ղազինյանը, որը անդրադարձավ 2 հարցի` իր առաջարկած ծրագրի իրատեսությանը և Համալսարանում տիրող մթնոլորտին: Գ. Ղազինյանը նշեց, որ ինքը տեսնում է իր կողմից առաջարկված բարեփոխումների ինչպես ֆինանսական, այնպես էլ կադրային և մարդկային ռեսուրսները:

Իսկ համալսարանում տիրող մթնոլորտը ըստ Գ. Ղազինյանի, պայմանավորված ռեկտորի ընտրությունների երկարաձգմամբ, լարված է և այս անգամ կարևոր է ռեկտորի ընտրությունը:

Հայտարարվեց հարցերի առաջին հերթագրում, գրանցվեցին Վ. Դումանյանը և Տ. Թորոսյանը:

Վ. Դումանյանի հարցին, թե ինչպես է Գ. Ղազինյանը վերաբերվում խորհրդի անդամների փոփոխություններին Գ. Ղազինյանը պատասխանեց, որ փոփոխությունները արվել են օրենքի համապատասխան և դա ԵՊՀ խորհրդի քննարկման առարկա չէ:

Տ. Թորոսյանը հարցին, թե արդյոք Ղազինյանը չի կարևորում գիտական գրադարանի զարգացումը, քանի որ ծրագրում այդ մասին թույլ է արտահայտումը, Գ. Ղազինյանը պատասխանեց, որ ինք շատ կարևորում է գրադարանի զարգացումը:

Հայտարարվեց հարցերի երկրորդ հերթագրում, գրանցվեցին Գ. Անանյանը, Հ. Սարգսյանը :

Գ. Անանյանի հարցին, թե մամուլում ճիշտ է արտահայտված Գ. Ղազինյանի դիրքորոշումները, Ղազինյանը դրական պատասխանեց:

Հ. Սարգսյանը հարցրեց, թե ինչպես է Ղազինյանը վերաբերում ուսանողների մեծ թվաքավակին: Գ. Ղազինյանը պատասխանեց, որ ընդունելությունը չի իրականացնում ԵՊՀ-ն, սակայն ինքը կողմնակից է կրճատմանը:

Երկրորդը ելույթ ունեցավ Արամ Սիմոնյանը:

Արամ Սիմոնյանը իր ելույթում կարևորեց համալսարանի ինչպես մասնագետ, այնպես էլ ՀՀ լիարժեք քաղաքացի ձևավորելու խնդիրը: Նա նշեց, որ համալսարանը պետք է լինի բաց համակարգ և առավելագույնս թափանցիկ հասարակության առաջ:

Հայտարարվեց հարցերի առաջին հերթագրում, գրանցվեցին Տ. Թորոսյանը, Հ. Սարգսյանը:

Տ. Թորոսյանը հարցրեց Սիմոնյանի ծրագրում հայագիտական աշխատանքների կարևորման մասին, որին էլ Սիմոնյանը պատասխանեց, քանի որ այժմ ԵՊՀ-ում ինքն է ղեկավարում այդ աշխատանքները և շատ կարևորում է դրանց զարգացումը:

Հ. Սարգսյանը կրկնեց իր հարցը, որին Սիմոնյանը պատասխանեց, որ ուսանողների քանակի կրճատումը բնականոն գործընթաց կլինի քանի որ համալսարանը այժմ անցել է բարձր մրցունակության գոտի:

Հայտարարվեց հարցերի երկրորդ հերթագրում, գրանցվեցին Լ. Շեկյանը և Ս. Հարությունյանը:

Լ. Շեկյանը հարցի, թե ինչու է Սիմոնյանի ծրագրում գիտական պրոռեկտորի ենթակայությունից հանվել միջազգային կապերը, Սիմոնյանը պատասխանեց, որ շատ կարևոր է Գիտական պրոռեկտորի աշխատանքը և բարեփոխումների իրագործումը և ճիշտ է նրա ավելորդ ծանրաբեռնվածությունը:

Ս. Հարությունյանը նշեց, թե ինչ քայլեր է ձեռնարկելու Ա. Սիմոնյանը ԵՊՀ-ի որպես հետազոտական համալսարանի զարգացման ճանապարհին, որին էլ Ա. Սիմոնյանը պատասխանեց, որ քայլերը շատ են և դրան պետք է գնալ քայլ առ քայլ:

### **3. Խորհրդի անդամների ելույթներ:**

Ելույթ ունեցան խորհրդի անդամներ Տ. Թորոսյանը, Ռ. Պետրոսյանը, Վ. Դումանյանը, Գ. Անանյանը, Հ. Միրզոյանը, Ա. Հարությունյանը, Յ. Վարդանյանը, Կ. Գրիգորյանը, Գ. Ղազինյանը:

### **4. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:**

Խորհրդի կողմից առաջարկվեցին Վ. Դումանյանի, Պ. Բալայանի, Ա. Մամաջանյանի, Ա. Խոյեցյանի և Ռ. Գրիգորյանի թեկնածությունները:

Խորհուրդը որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը վերոհիշյալ թեկնածություններով:

Կողմ` 71, դեմ` 0, ձեռնպահ` 0:

## 5. Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:

Քանի-որ թեկնածուներից ոչ ոք ինքնաբացարկ չհայտարարեց, երկու թեկնածուների անուններն էլ ընդգրկվեցին քվեաթերթիկ:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Դումայանը խորհրդի անդամներին ներկայացրեց քվեարկության կարգը, որից հետո կազմակերպվեց փակ (գաղտնի) քվեարկություն:

Քվեարկության արդյունքները հետևյալն էին.

Սիմոնյան Արամ՝ 41 կողմ,  
Ղազինյան Գագիկ՝ 24 կողմ,  
Բոլորին դեմ՝ 4 ձայն,  
Անվավեր՝ 2 քվեաթերթ:

Հաշվի առնելով քվեարկության արդյունքները, համաձայն ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի, խորհուրդը որոշեց Հաստատել քվեարկության արդյունքները և ԵՊՀ ռեկտոր ընտրված համարել Սիմոնյան Արամին:

Երևանի պետական համալսարանի խորհրդի նախագահ Ս. Ա. Սարգսյանին՝

ա) ԵՊՀ խորհրդի որոշումը և ռեկտորի ընտրության արդյունքները (ընտրական հանձնաժողովի թիվ 1 նիստի արձանագրության 2-րդ բնօրինակը) մեկօրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու համար.

բ) միջնորդել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանի հետ 5 տարի ժամկետով պայմանագիր կնքելու համար:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

15.05.2006թ.

ք. Երևան